# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2026 թվականի թիվ 0349-Ա

### ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ *որոշում եմ.*

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | Չափաբաժնի | Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | համարը | անվանումը | գնման գինը ՀՀ դրամ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՍՄՍՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/8 | 1 | Թվային կարգավորիչ (ուժեղացուցիչ տակդիրով) /լրակազմ/ | 2280000 (երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար) | «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 01091058 | Երևան,Նոր-Նորք, Մոլդովական Փ.60Շ, 0062 | 27.03.2026թ. | Սիսիան համայնք | Մրցույթի հաղթող Արսշին 91 Գրուպ ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրելու պայմանով, սակայն նշված ժամկետում որևէ գործողություն չի իրականացվել | Առկա չէ |

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրազեկմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝ Հ. Առաքելյան**

2026թ. ապրիլի 13
ք.Սիսիան